ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ
ՀԶՈՐԱՑՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ 2021

Հայաստան

Հոկտեմբեր 2022

USAID FROM THE AMERICAN PEOPLE

ICNL INTERNATIONAL CENTER FOR NOT-FOR-PROFIT LAW

fhi360 THE SCIENCE OF IMPROVING LIVES

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ 2021

Հայաստանի համար

Հոկտեմբեր 2022

Մշակված է՝

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
Ժողովրդավարության, կոնֆլիկտի և մարդասիրական աջակցության բյուրո
Ժողովրդավարության, մարդու իրավունքների և կառավարման գերազանցության կենտրոն

Այս հրապարակումը հնարավոր եղավ Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից տրամադրված աջակցության միջոցով `AID-OAA-LA17-00003 համաձայնագրային համաձայնագրով:

Ծանուցում. Սույն փաստաթղթում արտահայտված կարծիքները պանելիստների և ծրագրի այլ հետազոտողների կարծիքներն են և անպայման չեն արտացոլում USAID- ի կամ FHI 360- ի տեսակետները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս հրապարակումը հնարավոր չէր լինի առանց բազմաթիվ անհատների և կազմակերպությունների ներդրումների: Մենք հատկապես երախտապարտ ենք մեր իրականացնող գործընկերներին, ովքեր կարևոր դեր խաղացին փորձագիտական խմբի հանդիպումները կազմակերպելու և իրենց երկրների մասին հաշվետվություններ գրելու գործում: Մենք նաև ցանկանում ենք շնորհակալություն հայտնել ՔՀԿ-ների բազմաթիվ ներկայացուցիչներին և փորձագետներին, ԱՄՆ ՄԶԳ գործընկերներին և միջազգային դոնորներին, ովքեր մասնակցել են յուրաքանչյուր երկրում կազմակերպված փորձագիտական հանդիպումներին: Այս ինդեքսը հիմնված է նրանց գիտելիքների, ընկալումների, գաղափարների, դիտարկումների և մասնակցության վրա:

Տեղական գործընկեր՝

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՔՁՀՀ)

Սոնյա Մսրյան

Նախագծի ղեկավարներ՝

FHI 360

Միքայել Կոտտ

Եկա Իմերլիշվիլի

Ալեքս Նեջադյան

Խմբագրակամ կոմիտե՝

Էրիկ Մքքարտիի, Միքաել Կոտտ, Ջենիֆեր Ստյուարտ և Նատալիա Շարապովա

Մայրաքաղաք: Երևան
Բնակչություն: 3,000,756
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (PPP): $12,600
Մարդկային զարգացման ինդեքս: Բարձր (0.759)
Ազատության աստիճանը: Մասնակի ազատ (55/100)

ՔՀԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ: 3.6



2021 թվականին Հայաստանը շարունակում էր կրել Արցախի Հանրապետության տարածքում (Լեռնային Ղարաբաղ) Ադրբեջանի հետ 44-օրյա պատերազմում կրած պարտության հետևանքները: Արդյունքում, տարվա ընթացքում հանրային ուշադրությունը մեծապես կենտրոնացած էր ազգային անվտանգության խնդիրների, Արցախում հումանիտար ճգնաժամի և հայ-ադրբեջանական ու արցախա-ադրբեջանական սահմաններին ստեղծված անկայուն իրավիճակի վրա: Չնայած 2020-ի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագրի, որով պատերազմն ավարտվեց, 2021 թվականին ադրբեջանական զինված ուժերը հաճախակի ռազմական գործողություններ էին հրահրում Հայաստանի հետ սահմանին: Մայիսին ադրբեջանական զինված ուժերը հարձակում գործեցին Հայաստանի սուվերեն տարածքի վրա, իսկ նոյեմբերին սկսվեցին լայնածավալ ռազմական գործողություններ, որոնց հետևանքով հայկական կողմն ունեցավ զոհեր ու գերեվարված զինվորներ: Ընդհանուր առմամբ, հայաստանյան հասարակությունում տիրում էր հիասթափություն և անհանգստություն՝ պայմանավորված պատերազմի կործանիչ հետևանքներով և անորոշությամբ: Պատերազմին հաջորդած քաղաքական, սոցիալական և տնտեսական իրավիճակը Հայաստանում իր ազդեցությունն ունեցավ նաև ՔՀԿ-ների վրա՝ առաջնահերթ դարձնելով հումանիտար ու սոցիալական օրակարգերը:

Տարվա ընթացքում Հայաստանը նաև առերեսվեց նշանակալի քաղաքական ճգնաժամի հետ: Պատերազմում Հայաստանի պարտությունից և զինադադարի համաձայնության ստորագրումից հետո զինվորական ղեկավարությունը պահանջեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, որից հետո ընդդիմությունը կազմակերպեց ցույցեր: 2021 թվականի ապրիլին Փաշինյանը հրաժարական տվեց՝ քաղաքական ճգնաժամը հաղթահարելու նպատակով, ինչին հաջորդեցին արտահերթ խորհրդարանական ընտրությունները հունիսին: Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Ազգային Ժողովում կազմեց մեծամասնություն, և Փաշինյանը վերանշանակվեց վարչապետի պաշտոնում: Երկու ընդդիմադիր ուժերը՝ «Հայաստան» ու «Պատիվ ունեմ» դաշինքները, նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, ևս ստացան պատգամավորական մանդատներ: Միջազգային կազմակերպությունների ու Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ ընտրություններն ազատ էին, մրցակցային, արդար և պատշաճ ձևով կազմակերպված: Ընդդիմությունը բողոքարկեց ընտրությունների արդյունքները, սակայն Սահմանադրական դատարանը դրանք թողեց անփոփոխ: Քաղաքական իրավիճակը կայունացավ 2021-ի օգոստոսին՝ նոր կառավարության ձևավորումից հետո:

Ելնելով արտահերթ ընտրությունների դրական փորձից, ընտրական և արդարադատության ոլորտի բարեփոխումների հաջող իրականացումից և ժողովրդավարական կառավարման առումով առաջընթացից՝ Freedom House-ը 2022-ի իր Nations in Transit զեկույցում Հայաստանի վարկանիշը փոխեց՝ կիսակոնսոլիդացված ավտորիտար ռեժիմը փոխարինելով անցումային կամ հիբրիդային

կառավարման ռեժիմով: Միևնույն ժամանակ, մեդիայի ազատության վարկանիշի առումով նույն զեկույցում արձանագրվեց հետընթաց, քանի որ իշխող կուսակցության պատգամավորները վերաքրեականացրին հանրային գործիչների նկատմամբ զրպարտության և վիրավորանքի մի շարք դրսևորումներ ՝ վտանգելով խոսքի և մամուլի ազատությունը:

2021-ին հայաստանյան հասարակությունը շարունակում էր կրել COVID-19 համավարակի հետևանքները: 2021-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ COVID-19-ի ընդհանուր դեպքերի թիվը հասավ 344,930-ի, իսկ մահերի թիվը՝ 7,975-ի: 2021-ին երկիրը կրեց համավարակի երկու ալիքների ազդեցությունը. առաջինը՝ մարտին ու ապրիլին, և երկրորդը՝ հոկտեմբերին ու նոյեմբերին՝ 1,500-2,500 օրական դեպքերի միջին առավելագույն թվով: Չնայած կառավարությունն աշխատում էր հանրության շրջանում պատվաստումները խթանելու ուղղությամբ, դավադրապաշտական տեսությունների ու պատվաստանյութերի հանդեպ անվստահության արդյունքում տարեվերջի դրությամբ բնակչության միայն 31.9 տոկոսն էր ստացել պատվաստանյութի առնվազն մեկ չափաբաժին, և միայն 23.4 տոկոսն էր լիարժեք պատվաստված: Այդուհանդերձ, COVID-19-ի հետ կապված սահմանափակումների մեծ մասը, ինչպես, օրինակ, դիմակների պարտադիր կրելը, սոցիալական հեռավորության պահպանումը և հանրային հավաքներին վերաբերող սահմանափակումները, կամ աստիճանաբար հանվեցին, կամ թուլացվեցին, ինչի արդյունքում վարակման դեպքերի թիվը մինչև տարվա վերջ նվազեց:

2021-ին ՔՀԿ ոլորտում կայությունը մեծ մասամբ պահպանվեց, որոշ չափումների առումով արձանագրելով բարելավում՝ հավասարակշռելով վատթարացումը մյուս չափումներով: ՔՀԿ-ների շարունակական թվայնացման և կարողությունների զարգացման արդյունքում՝ 2021-ի ընթացքում ոլորտի կազմակերպական կարողությունները բարելավվեցին: Շահերի պաշտպանության առումով, ընդհակառակը, արձանագրվեց հետընթաց, քանի որ ՔՀԿ-ների մասնակցությունը որոշումների կայացմանը և հանրային երկխոսությանը նվազեց: Ֆինանսական կենսունակությունը նույնպես նվազեց՝ պայմանավորված օտարերկրյա դոնորների ֆինանսավորման ավելի ու ավելի անհամաչափ դարձող հասանելիությամբ և հանրային միջոցների ոչ թափանցիկ բաշխման վերաբերյալ շարունակվող բողոքներով:

Արդարադատության նախարարության էլեկտրոնային ռեգիստրը (ԱՆ) տեղեկատվություն է տրամադրում օրինական գրանցված հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների թվի վերաբերյալ: Ըստ ԱՆ-ի վիճակագրության ՝ 2021-ին հասարակական կազմակերպությունների թիվն աճել է 523-ով՝ դառնալով 5,659: Հիմնադրամների թիվը ևս աճել է՝ 2021-ի 1,335-ից դառնալով 1,476 2021-ին: Միևնույն ժամանակ, ինչպես նշվել է նախորդ զեկույցներում, կա 225 իրավաբական անձ հանդիսացող գրանցված միավորում, չնայած, 2017-ի օրենսդրական փոփոխությունների արդյունքում, դրանք չեն համարվել իրավաբանական կառույցներ: Ակնկալվում է, որ այս իրավաբանական միավորումները պետք է փոփոխեն իրենց կանոնադրությունները և վերագրանցվեն կամ որպես հիմնադրամներ, կամ որպես հասարակական կազմակերպություններ: Այնուամենայնիվ, գործընթացը հիմնականում դադարեցվել է՝ օրենսդրական կիրարկման/հարկադրանքի բացակայության պատճառով:

Ըստ «Արցախպրես»-ի՝ Արցախի Հանրապետությունում կան գրանցված մոտ 250 ՔՀԿ-ներ: Դրանց մեծ մասն աշխատում է բարեգործության և սոցիալական օգնության, երիտասարդության, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, արվեստի և սպորտի ոլորտներում: Փորձագետների գնահատմամբ՝ գրանցված ՔՀԿ-ների 20 տոկոսից պակասն է ակտիվ: Վերջիններիս մեծ մասը կենտրոնացած է մայրաքաղաք Ստեփանակերտում: 44-օրյա պատերազմի հետևանքով մի շարք ՔՀԿ-ներ, հատկապես ադրբեջանական ռազմական ուժերի կողմից օկուպացված տարածքներում գործողները, դադարեցրել են իրենց գործունեությունը, մինչդեռ մյուսները փոխել են գործունեության ուղղությունը՝ բարեգործությամբ, մարդասիրական օգնությամբ և սոցիալական աջակցությամբ զբաղվելու նպատակով:

ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ: 3.6

2021-ի ընթացքում ՔՀԿ-ների կառավարման իրավական և կարգավորիչ միջավայրը հիմնականում մնացել է անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ների գործունեության միջավայրն ազատ է: Օրենսդրական դաշտը թույլատրում է երկու տիպի կազմակերպությունների գրանցում՝ անդամակցության վրա հիմնված հասարակական կազմակերպություններ, որոնք կարգավորվում են «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով, և անդամակցության վրա չհիմնված հիմնադրամներ, որոնք կարգավորվում են «Հիմնադրամների մասին» օրենքով: Այս երկուսի համար նախատեսված գրանցման գործընթացը պարզ է և հեշտ: ՔՀԿ-ները կարող են գրանցվել ԱՆ-ի պետական ռեգիստրի տարածքային գրասենյակներում: Չնայած ավանդական բիզնեսները կարող են գրանցվել առցանց, ՔՀԿ-ների համար առցանց գրանցման համակարգ դեռևս գոյություն չունի: Հանրային կառույցի կամ հիմնադրամի գրանցումը տևում է տասից տասնհինգ օր, իսկ արժեքը կազմում է մոտ 20 ԱՄՆ դոլար: Չնայած գրանցման պարզ գործընթացին՝ ՔՀԿ-ի լուծարման կամ փակման գործընթացը մնում է բարդ, ինչի արդյունքում կան բազմաթիվ չգործող կազմակերպություններ, որոնք գոյություն ունեն միայն գրանցամատյաններում:

ՔՀԿ-ները կարող են գործել առանց գրանցման, քանի դեռ համապատասխանում են ընդհանուր իրավական կարգավորումներին և չեն իրականացնում ֆորմալ ֆինանսական գործարքներ: Այնուամենայնիվ, ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերի համար դեռևս հասանելի են ֆինանսավորման մի շարք աղբյուրներ՝ ներառյալ քրաուդֆանդինգը և տեղական բարեգործությունը:

«Հասարակական կազմակերպությունների մասին» և «Հիմնադրամների մասին» օրենքները հստակ կերպով կարգավորում են ՔՀԿ-ների ներքին կառավարումը՝ սահմանելով հոգաբարձուների խորհրդի, վերահսկիչ կոմիտեի, գործադիր մարմնի, անդամների և անձնակազմի դերերն ու պատասխանատվությունների շրջանակը: Օրենքները նաև երաշխավորում են ՔՀԿ-ների անկախությունը՝ սահմանափակելով պետության կամ որևէ երրորդ կողմի միջամտությունը ՔՀԿ-ի ներքին գործերին, քանի դեռ այն գործում է օրենքի շրջանակում:

2021-ի մայիսին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունը ՔՀԿ-ներին թույլ է տալիս ներկայացնել իրենց շահառուներին դատարանում՝ շրջակա միջավայրի և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը վերաբերող գործերում: ՔՀԿ-ները ողջունեցին այս փոփոխությունը, քանի որ նախկինում նրանց թույլատրվում էր ներկայացնել հանրային շահը բնապահպանական ոլորտի խնդիրների դեպքում և/կամ ներկայացնել իրենց շահառուներին դատարանում՝ նոտարով վավերացված լիազորագրի միջոցով: Այնուամենայնիվ, դատարանում շահառուների ներկայացման ընթացակարգերը մնում են բարդ և բյուրոկրատացված:

2020-ի մարտին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ սկսած 2021-ի մայիսից, ՔՀԿ-ները պարտավոր են ներկայացնել տարեկան հաշվետվություն՝ ներառելով տեղեկատվություն իրենց առաքելության և նպատակների, իրականացրած ծրագրերի, եկամուտների ու ծախսերի մասին: Ձևաչափերը և հաշվետվությունների պահանջները տրամադրում է Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ): Թեև ՔՀԿ-ները մտավախություն ունեն, որ հաշվետվությունների ներկայացման նոր պահանջներն ավելորդ ծանրաբեռնվածություն են ստեղծում, նրանք այս փոփոխությունները որակում են որպես դրական քայլ՝ ուղղված ոլորտի ընդհանուր թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը: Ըստ «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» ՔՀԿ-չափիչի՝ 2021-ին ՊԵԿ-ի կողմից հասարակական կազմակերպություններին տրվել է 790, իսկ հիմնադրամներին՝ 356 նախազգուշացում՝ հաշվետվության պահանջները ժամանակին չկատարելու համար: Բացի այդ, ՊԵԿ-ը տուգանել է ՔՀԿ-ներին՝

նախազգուշական ծանուցումներ ստանալուց հետո պահանջները չկատարելու համար: Առաջին ծանուցումը ստանալուց հետո 21 ՔՀԿ տուգանվել է 50,000 ՀՀ դրամի չափով (մոտ 100 ԱՄՆ դոլար), և 10 ՔՀԿ տուգանվել է 200,000 դրամի չափով (մոտ 420 ԱՄՆ դոլար)՝ երկրորդ ծանուցումը ստանալուց հետո:

Արցախյան պատերազմի ժամանակ հայտարարված ռազմական դրությունն ուժի մեջ մնաց մինչև 2021-ի մարտը, թեև կառավարությունը 2020-ի դեկտեմբերին չեղարկեց հանրային հավաքների և գործադուլների մասին դրույթը: Այնուամենայնիվ, COVID-19 համավարակի սահմանափակումներով պայմանավորված, հանրային հավաքներն արգելված էին մինչև 2021-ի օգոստոսը: Չնայած այդ սահմանափակումներին՝ հանրային հավաքներ ժամանակ առ ժամանակ կազմակերպվում էին: Այս բողոքի ակցիաների և ցույցերի ընթացքում արձանագրվել են իրավապահ մարմինների կողմից բռնության մի շարք դեպքեր՝ մատնանշելով ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառում:

2021-ին կառավարությունը հայտարարեց սահմանափակումներ, որոնք կարող էին ստեղծել խոչընդոտներ ազատ խոսքի և լրատվամիջոցների ազատության առումով: Դրանք ներառում էին լրագրողների ազատ տեղաշարժի սահմանափակումներ Ազգային Ժողովում և Սյունիքի մարզի մի քանի շրջաններում: ՔՀԿ-ները և միջազգային կազմակերպությունները նաև մտահոգություն հայտնեցին, որ իշխանությունները կարող են ոտնահարել խոսքի ազատությունը՝ չարաշահելով քաղաքական և հասարակական գործիչների նկատմամբ զրպարտության և վիրավորանքի քրեականացումը, և ճնշումների ենթարկել գործող պաշտոնյաներին քննադատող լրատվամիջոցների ու հասարակական գործիչներին: Մինչև 2021-ի ավարտն արդեն 9 քրեական գործ էր հարուցվել հասարակական գործիչներին, այդ թվում՝ վարչապետ Փաշինյանին զրպարտելու մեջ մեղադրվող անձանց նկատմամբ: Բացի այդ, ՔՀԿ-ները և Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն (ԽԱՊԿ) հաղորդել են ընդդիմության բողոքի ակցիաներն ու ցույցերը լուսաբանող լրագրողների նկատմամբ բռնության դեպքերի թվի աճի մասին:

2021-ի նոյեմբերին, պետության կողմից հետապնդման հազվադեպ դեպքերից մեկի ընթացքում, փոքրամասնությունների իրավունքները ներկայացնող ՔՀԿ-ի ղեկավարին և իրավապաշտպանին մեղադրանք է առաջադրվել «ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն հրահրելուն ուղղված գործողությունների համար»: Գործը հարուցվել է ի պատասխան հարցազրույցի, որում ակտիվիստը խոսել է Հայաստանում եզդի փոքրամասնության առջև ծառացած խնդիրների և խտրականության մասին: Չնայած ՔՀԿ-ների և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների՝ Freedom House-ի, Human Rights Watch-ի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի բազմաթիվ հայտարարություններին ու միջնորդություններին, գործն ուղարկվեց դատարան:

ՔՀԿ-ներին օրենքով թույլատրվում է հավաքագրել ֆինանսական ռեսուրսներ օտարերկրյա դոնորներից, ինչպես նաև դրամահավաքների, ապրանքների ու ծառայությունների մատուցման և գնումների գործընթացներին մասնակցության միջոցով: Նման գործունեության արդյունքում ստացված եկամուտը պետք է օգտագործվի բացառապես կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

Պետական գնումների գործընթացներին մասնակցելիս ՔՀԿ-ները գտնվում են անբարենպաստ դրիքում՝ մրցակցելով ավանդական բիզնեսների հետ, քանի որ 10 միլիոն դրամը (մոտ 20,000 ԱՄՆ դոլար) գերազանցող պետական միջոցներ ստացող հասարակական կազմակերպությունները պարտավոր են անցնել անկախ աուդիտ: Հետևաբար, ՔՀԿ-ները պետք է ներառեն աուդիտի ծախսերը իրենց հայտերում՝ ի տարբերություն ավանդական բիզնեսների, որոնք ենթակա չեն պարտադիր աուդիտի՝ հանրային միջոցներով իրականացվող ծրագրերի համար: Ավելին, ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեությունը ենթակա է հարկման՝ 20 տոկոս ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) չափով, և առանձին հաշվապահական գործառնությունների, մինչդեռ ավանդական բիզնեսները օգտվում են հարկման պարզ մեխանիզմներից: Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ները ավելի հազվադեպ են անցնում հարկային ստուգումներ, քան ավանդական բիզնեսները: Սոցիալական ձեռնարկատիրությամբ հետաքրքրված ՔՀԿ-ները նախընտրում են հիմնել առանձին շահույթ հետապնդող կազմակերպություններ կամ գործել որպես մասնավոր ձեռներեցներ, ուղղակիորեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու փոխարեն: Դա նրանց թույլ է տալիս օգտվել բարելավված հարկման մեխանիզմներից՝ ցածր հարկային դրույքաչափերով և պարզեցված բյուրոկրատական մեխանիզմներով:

115 միլիոն ՀՀ դրամը (մոտ 280,000 ԱՄՆ դոլար) գերազանցող տարեկան շրջանառություն (դրամաշնորհներից ստացված եկամուտները ներառյալ) ունեցող ՔՀԿ-ները, պարտավոր են վճարել 20 տոկոս ԱԱՀ: Պետական հումանիտար հանձնաժողովի կողմից բարեգործական համարվող և Հայաստանի ու համապատասխան դոնոր երկրների միջև միջկառավարական համաձայնագրերով իրականացվող ծրագրերն ազատվում են ԱԱՀ-ից:

ՔՀԿ-ներին արվող նվիրատվությունները խթանելուն ուղղված ֆինանսական խրախուսումները սահմանափակ են: Առևտրային կազմակերպությունները կարող են համախառն տարեկան եկամտի մինչև 0,25 տոկոսը հատկացնել իրավասու ՔՀԿ-ներին նվիրատվություններ կատարելուն: Անհատ դոնորներն իրենց կատարած ներդրումների համար հարկային պահումներ չեն ստանում:

ՔՀԿ-ները կարող են ստանալ իրավաբանական խորհրդատվություն այնպիսի ՔՀԿ-ներից, ինչպիսիք են «Իրավաբանների հայկական ասոցիացիան» (ԻՀԱ), «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻԱԿ), «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»-ը, «ՀԿ կենտրոն»-ը (ՀԿԿ) և «Եվրասիա համագործակցության հիմնադրամը» (ԵՀՀ): Քանի որ հեռավար աշխատանքը վերջին երկու տարիների ընթացքում ավելի լայն տարածում է ստացել, իրավական փորձաքննությունը ՔՀԿ-ների համար դարձել է ավելի հասանելի ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ այլ քաղաքներում: Այդուհանդերձ, ոլորտում իրավաբանական աջակցության պահանջարկը մեծ չէ, և շատ քչերն են մասնագիտանում՝ ՔՀԿ իրավական դաշտի մեջ այսպիսի ծառայությունների նկատմամբ պահանջարկի ցածր լինելու պատճառով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: 3.2



2021-ի ընթացքում կազմակերպական կարողությունները բարելավվել են՝ թվայնացման շարունակական բարելավման և կարողությունների զարգացման շնորհիվ:

2020-ին երկրի առջև ծառացած ճգնաժամերի, մասնավորապես՝ COVID-19 համավարակի և Արցախյան պատերազմի պատճառով, 2021-ին ՔՀԿ-ները շարունակում էին մարդասիրական օգնություն ցուցաբերել իրենց շահառուներին:

ՔՀԿ-ները կենտրոնացան նոր ի հայտ եկած այնպիսի կարիքների վրա, ինչպիսիք են՝ COVID-19-ից տուժած խոցելի ընտանիքների, պատերազմի ընթացքում տեղահանվածների և վիրավոր զինվորների ու նրանց ընտանիքների կարիքները: Արդյունքում նրանք զարգացրեցին դաշտային աշխատանքների իրականացման կարողությունները՝ ներառյալ կարիքավոր մարդկանց նույնականացումը, արագ գնահատումների իրականացումը, նոր շահառուների հետ աշխատանքը, օգնություն տրամադրելու ընթացքում տարբեր դերակատարների հետ աշխատանքի համակարգումը և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությունը: Բացի այդ, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական ՔՀԿ-ների լայն շրջանակներ զարգացրեցին տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործման հմտությունները՝ պոտենցիալ շահառուների հետ հարաբերություններ ձևավորելու նպատակով:

Ի պատասխան 2020-ի ցնցումներին՝ 2021-ին ՔՀԿ-ները վերագնահատեցին իրենց ռազմավարությունն ու քաղաքականությունը՝ կենտրոնանալով արտակարգ իրավիճակներում դիմադրողականության և պատրաստվածության վրա: Տարվա ընթացքում դոնորների կողմից ֆինանսավորվող որոշ ծրագրեր ևս ուղղված էին Քաղաքացիական հասարակության դիմադրողականությանն ու կայունությանը: Օրինակ, Եվրոպական Միության (ԵՄ) ֆինանսավորմամբ իրականացվող «COVID-19. քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն» ծրագիրը ՔՀԿ-ներին տրամադրում էր թվայնացման դրամաշնորհներ՝ նրանց գործունեության շարունակականության ապահովման, առցանց աշխատանքի բարելավման և COVID-19-ի անմիջական ու երկարաժամկետ ազդեցությունների մեղմացման նպատակով: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող մեկ այլ ծրագիր՝ Արևելյան

գործընկերության (ԱրլԳ) COVID-19 համերաշխության ծրագիրը, ուղղված էր ՔՀԿ-ների և վերահսկող նախաձեռնությունների կարողություններին՝ ներառական վերականգնման քաղաքականությունների և ոլորտային բարեփոխումների համար: Բացի այդ, տեղական ՔՀԿ-ներն իրականացրին ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «COVID-19. արձագանք համայնքներին» ծրագիրը, որն ուղղված էր համայնքների դիմադրողականությանը և COVID-19-ի ազդեցություններին: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների կողմից սահմանված առաքելությունների ու ռազմավարական ծրագրերի և նրանց իրական գործունեության միջև դեռևս առկա են բացեր, քանի որ ՔՀԿ-ները հաճախ գործում են իրավիճակից ելնելով՝ աշխատանքը համապատասխանեցնելով հասանելի դրամաշնորհներին և ծրագրերին:

ՔՀԿ-ների համար հասանելի են այն ուղեցույցները, կարողությունների զարգացման և ինքնագնահատման գործիքներին, որոնք մշակվել են դոնորների կողմից ֆինանսավորվող տարբեր ծրագրերի շրջանակում՝ նրանց ներքին կառավարման ու ծրագրերի իրականացման կարողությունների զարգացման նպատակով: Օրինակ, 2021-ին ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի շրջանակում, գործընկեր կազմակերպությունները գործարկեցին Երիտասարդական ծրագրերի գնահատման գործիքը՝ երիտասարդական կազմակերպություններին ծրագրերի արդյունավետության խթանման գործում օգնելու նպատակով: Մյուս կողմից, թեև շատ ՔՀԿ-ներ ունեն ներքին կառավարումը կարգավորող քաղաքականություններ, ընթացակարգեր ու համակարգեր, միայն համեմատաբար խոշոր չափերով ՔՀԿ-ներն են դրանց հետևում: Փոքր չափերով ՔՀԿ-ներին բնորոշ չէ դերերի և պարտականությունների հստակ բաշխումը հոգաբարձուների խորհրդի անդամների ու աշխատակազմի միջև: Շատացել են դեպքերը, երբ ՔՀԿ-ները ընդունում են շահերի բախման փաստը և ձգտում հնարավորինս խուսափել նման խնդիրներից:

Միայն համեմատաբար խոշոր չափերով, երկարաժամկետ ֆինանսավորման հասանելիություն ունեցող ՔՀԿ-ները են կարող իրենց թույլ տալ ունենալ մշտական անձնակազմ: Արդյունքում, փոքր չափերով ՔՀԿ-ներն ակտիվ ծրագրեր իրականացնելիս հիմնականում հիմնվում են ծառայությունների մատուցման կարճաժամկետ պայմանագրերի վրա: Որպես կանոն, ՔՀԿ-ները արտապատվիրում են այնպիսի մասնագիտական ծառայություններ, ինչպիսիք են հաշվապահությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, մարքեթինգը և իրավաբանական ծառայությունները: Միայն մի քանի խոշոր չափերով ՔՀԿ-ներ կարող են իրենց թույլ տալ մշտապես ունենալ այդ մասնագիտությունները ներառող անձնակազմ: ՔՀԿ-ները, հատկապես մարզայինները, հաջողությամբ ներգրավում են կամավորների: 2021-ին կամավորության մակարդակը որոշակիորեն նվազել է՝ ի համեմատ 2020-ին աճի: Այնուամենայնիվ, կամավորության մշակույթը զարգանում է երիտասարդների շրջանում, ովքեր այն ընկալում են որպես լավ մեկնարկային կետ իրենց ապագա կարիերայի հնարավորությունների առումով: Ըստ Charities Aid հիմնադրամի World Giving Index 2022-ի, որն ընդգրկում է 2021-ի զարգացումները, Հայաստանում հարցվածների 11 տոկոսը նշել է, որ նախորդ ամսվա ընթացքում զբաղվել է կամավորությամբ:

2021-ին ՔՀԿ-ները շարունակեցին բարելավել իրենց հմտությունները և թվային տեխնոլոգիաների կիրառումը՝ որդեգրելով հեռավար աշխատանքի պրակտիկաներ և կենտրոնանալով առցանց հարթակներում ներկայության և սոցիալական ցանցերում տեսանելիության ապահովման վրա: ՔՀԿ-ներն օգտագործում էին տարբեր հարթակներ՝ Zoom, Microsoft Teams և Slack, առցանց հանդիպումներ, քննարկումներ և դասընթացներ անցկացնելու և աշխատանքները կազմակերպելու համար: Աճել է նաև ՔՀԿ-ների ակտիվությունն ամենատարածված սոցիալական մեդիա հարթակներում՝ YouTube-ում, Instagram-ում և Telegram-ում: Անցումը հեռավար աշխատանքի ՔՀԿ-ներին հնարավորություն տվեց իրականացնել խնայողություններ՝ մշտական գրասենյակ պահելու, տրանսպորտի և կոմունալ ծառայությունների ծախսերի կրճատման հաշվին: Տարածաշրջանային ՔՀԿ-ները, հատկապես երիտասարդական նախաձեռնությունները և կազմակերպությունները, շարունակեցին օգտվել տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող շենքերում տրամադրվող անվճար գրասենյակային տարածքներից: Երկրի ողջ տարածքում հասանելի է համեմատաբար էժան ինտերնետ կապ: ՔՀԿ-ները շարունակում են պատշաճ ուշադրություն չդարձնել կիբերանվտանգության խնդիրներին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ: 5.0



Ֆինանսական կայունությունը, որը տևական ժամանակ Հայաստանում ՔՀԿ-ների կայունության ամենաթույլ չափանիշն էր, 2021-ին ավելի վատթարացավ՝ օտարերկրյա դոնորների ֆինանսավորման ավելի անհամաչափ դարձող հասանելիության և պետական միջոցների բաշխման թափանցիկության բացակայության վերաբերյալ շարունակվող բողոքների պատճառով: Պատերազմը և COVID-19-ը փոխեցին դոնորների և պետական ֆինանսավորման միջավայրը և թիրախային ոլորտները. մշակույթի և սպորտի ոլորտները սկսեցին ավելի քիչ ֆինանսավորում ստանալ: Արդյունքում, ըստ ՔՀԿ-ների՝ 2021-ի ընթացքում մի շարք ծրագրերի ֆինանսավորման ընդհանուր ծավալը և թիրախային ոլորտների բազմազանությունը կրճատվեցին: Թեև ՔՀԿ-ները գիտակցում են ինքնաֆինանսավորման կարևորությունը և այս ուղղությամբ փնտրում են տարբեր մոտեցումներ, մեծ մասը զգալիորեն կախված է մնում օտարերկրյա դոնորների ֆինանսավորումից:

Հայաստանում ՔՀԿ ոլորտին աջակցող հիմնական օտարերկրյա դոնորներն են ԵՄ-ն, ԱՄՆ ՄԶԳ-ն, Բաց հասարակության հիմնադրամները(ԲՀՀ) և Սևծովյան վստահություն տարածաշրջանային համագործակցության հիմնադրամը: Բացի այդ, փոքր դրամաշնորհներ են տրամադրվում Շվեդիայի, Հոլանդիայի և Գերմանիայի կառավարությունների, ԱՄՆ-ի, Չեխիայի և Ճապոնիայի դեսպանատների և Robert Bosch Stiftung, Friedrich Ebert և Heinrich Boell հիմնադրամների կողմից: 2021-ին մի շարք խոշոր միջազգային նախագծեր են իրականացվել ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ԴԱՏԱ (2020-2022), «Քաղաքացիական ներգրավվածություն տեղական ինքնակառավարման ոլորտում» (CELoG, 2014-2022) և «ՁԼՄ-ները հանուն քաղաքացիական ներգրավվածության» (2014-2022), ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Ուժեղ ՔՀԿ-ները և տեղական գործընկերությունները հաշվետու համայնքների և ներառական սոցիալական պաշտպանության համար Հայաստանում» (2021-2024 թթ.), «COVID-19. քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն» (2020-2024) և Արևելյան Գործընկերության «Քաղաքացիական հասարակության հնարավորություններ» (2021-2022 թթ.) ծրագրերի շրջանակում:

Փոքր չափերով և նորաստեղծ ՔՀԿ-ները մտահոգություն են հայտնում օտարերկրյա դոնորների ֆինանսավորմանը սահմանափակ հասանելիության վերաբերյալ, քանի որ այդ գումարի մեծ մասը հիմնականում ստանում են խոշոր չափերով և հայտնի ՔՀԿ-ները: Միևնույն ժամանակ, խոշոր կազմակերպությունները հաճախ ենթադրամաշնորհներ են տրամադրում ավելի փոքր կազմակերպություններին: Նման դրամաշնորհներ ստանալիս կազմակերպությունն ավելի լավ է ծանոթանում սահմանված ընթացակարգերին և ավելի հավանական է, որ հետագայում ևս կստանա ֆինանսավորում: Սոցիալական ձեռնարկություններին աջակցող դոնորները հիմնականում ֆինանսավորում են նորաստեղծ սոցիալական ձեռնարկություններին: Ավելի վաղ հիմնված սոցիալական ձեռնարկությունները շուկայում հանդիպում են դժվարությունների՝ պայմանավորված երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմամբ:

ՔՀԿ-ները պետական միջոցներ են ստանում ինչպես կենտրոնական կառավարման, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններից: 2021-ին կառավարությունը մոտ 75 միլիոն դրամ (մոտ 187,000 ԱՄՆ դոլար) է հատկացրել՝ ուղղված ՔՀԿ-ների աջակցությանը: ՔՀԿ-ների դիրքորոշումը կառավարության կողմից պետական միջոցների հատկացման վերաբերյալ գնալով ավելի բացասական է դառնում, քանի որ այն կազմակերպությունները, որոնք աջակցում են կառավարության քաղաքականությանը կամ ունեն կապեր պետական պաշտոնյաների հետ, հաճախ ստանում են պետական ֆինանսավորում՝ դրամաշնորհների տրամադրման ոչ թափանցիկ և ոչ մրցակցային ընթացակարգերի միջոցով:

2021-ին տեղական բարեգործների և սփյուռքի նվիրատվությունները որոշ չափով նվազեցին, քանի որ կառավարությունը չկարողացավ ապահովել Համահայկական հիմնադրամի միջոցով հավաքագրված

միջոցների բաշխման պատշաճ թափանցիկություն և հաշվետվողականություն: Հիմնադրամը պատերազմի ժամանակ հավաքեց ավելի քան 170 մլն ԱՄՆ դոլար, որից 105 միլիոնը փոխանցվեց կառավարությանը: Այդ միջոցները ծախսելու վերաբերյալ որևէ հանրային տեղեկատվություն չի հրապարակվել: Մարդիկ ավելի հակված են նվիրատվություններ կատարելու ՔՀԿ-ների կողմից նախաձեռնված ոչ ֆորմալ, փոքր հասարակական նախաձեռնություններին և դրամահավաքային արշավներին, որոնք ուղղված են կոնկրետ ու հստակ խնդիրների՝ աջակցություն խոցելի ընտանիքներին և վիրավոր զինվորներին, կարիքավոր մարդկանց կացարանի և առողջապահական ծախսերի փոխհատուցում: Ըստ World Giving Index 2022-ի՝ Հայաստանում հարցվածների 16 տոկոսը նշել է, որ 2021 թ.-ի ընթացքում կատարել է նվիրատվություն:

ՔՀԿ-ների շրջանում միջոցների հայթայթման նպատակով առցանց հարթակներ և այլ էլեկտրոնային գործիքների օգտագործումն ավելի լայն տարածում է ստացել: Օրինակ, ReArmenia համագործակցության հարթակը հաջողությամբ միջոցներ է հավաքագրել առցանց քրաուդֆանդինգ հարթակների միջոցով և ուղղել դրանք խնդիրների նորարարական լուծումներին աջակցությանը: ՔՀԿ-ները նաև սկսել են իրենց կայքերում ներառել «նվիրատվության» առանձին բաժին: Բացի այդ, պատերազմից հետո ստեղծվել են նոր հիմնադրամներ՝ զոհված զինվորների անունով: Այս հիմնադրամները հաջողությամբ միջոցներ հավաքագրեցին հանրային մի շարք ծրագրերի համար:

2021-ին կորպորատիվ բարեգործությունը 2020-ի համեմատ նվազել է, ընդ որում, կազմակերպությունները գերադասում են իրականացնել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սեփական նախագծերը՝ շրջանցելով ՔՀԿ-ներին:

Երկրում տնտեսական իրավիճակը՝ պայմանավորված համաճարակով և պատերազմով, շարունակել է բացասաբար ազդել ՔՀԿ-ների կարողության վրա՝ գեներացնել եկամուտ ծառայությունների, ապրանքների և ակտիվների վարձակալման միջոցով:

ՊԵԿ-ի և դոնոր կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների պարտադիր պահանջները ՔՀԿ-ներին խրախուսում են պահպանել ֆինանսական կառավարման կայուն համակարգեր: Բացի այդ, ՔՀԿ-ներն անցնում են արտաքին աուդիտ, եթե այն պահանջվում է պետության կամ դոնոր կազմակերպությունների կողմից: Որպես կանոն, ՔՀԿ-ներն արտապատվիրում են ֆինանսական կառավարման և հաշվապահական ծառայությունները:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ: 2.9



2021-ին ՔՀԿ-ների վիճակը շահերի պաշտպանության առումով փոքր-ինչ վատթարացավ: Երկրում ընդհանուր անկայուն քաղաքական իրավիճակով և ազգային անվտանգության խնդիրներով պայմանավորված՝ ՔՀԿ-ները սկսեցին լայնորեն կիրառել ինքնագրաքննություն՝ խուսափելով կառավարությանը քննադատելուց: Միևնույն ժամանակ, կառավարությունը հակված չէր ՔՀԿ-ներին ներգրավել հանրային քաղաքականության ձևավորման և բարեփոխումների իրականացման գործընթացներում: 2021-ին Հայաստանի միավորը V-Dem-ի քաղաքացիական հասարակության մասնակցության ինդեքսում նվազել է՝ դառնալով 0,8-ից 0,74[1]: Սա նշանակում է, որ ՔՀԿ-ներն ավելի հազվադեպ են կանոնավոր կերպով խորհրդատվություն ստանում քաղաքականություն մշակողների կողմից:

Հանրային խորհուրդները, որոնք պաշտոնապես կցված են նախարարություններին, պարտավոր են ապահովել ՔՀԿ-ների ներգրավվածությունը կառավարության կողմից որոշումների կայացման

[1] V-Dem-ն օգտագործում է 0-ից մինչև 1 սանդղակ, որտեղ 0-ն նշանակում է մասնակցության ցածր, իսկ 1-ը՝ բարձր աստիճան

գործընթացներում: Սակայն 2021 թ.-ի ընթացքում այս կառույցները հիմնականում չէին գործում՝ թե՛ ընտրություններից առաջ, և թե՛ հետո: Հանրային նշանակություն ունեցող իրավական ակտերը կարող են դառնալ ընդլայնված խորհրդակցությունների՝ խորհրդարանական լսումների և ՔՀԿ-ների հետ քննարկումների առարկա: Այնուամենայնիվ, տարվա ընթացքում ՔՀԿ-ների հետ պաշտոնական և ոչ պաշտոնական խորհրդակցությունները՝ նախաձեռնված կառավարության կողմից, նույնպես սահմանափակվեցին: Տարվա ընթացքում կարևորագույն իրավական ակտերից մի քանիսն ընդունվեցին հապճեպ կերպով՝ առանց պատշաճ խորհրդակցությունների և քննարկումների: Օրինակ, 2021-ի ապրիլին, երբ Ազգային Ժողովն ընդունեց Ընտրությունների մասին նոր օրենքը, օրենսդրական բարեփոխումների մշակմանն ու քննարկմանը մասնակցում էին սահմանափակ թվով ՔՀԿ ներկայացուցիչներ: Բացի այդ, գործընթացը հապճեպ էր, և բավարար ժամանակ չհատկացվեց շահագրգիռ ՔՀԿ-ների ավելի մասշտաբային և բովանդակալից մասնակցության համար: Միջազգային բյուջետային գործընկերության (IBP) և քաղաքացիական հասարակության գործընկերների, այդ թվում՝ Հայաստանում Թրանսփարենսի Ինթերնեշնլի զեկույցը ցույց է տալիս, որ COVID-19-ի հարկաբյուջետային քաղաքականության հաշվետվողականության մակարդակը սահմանափակ էր, ոչ թափանցիկ և զուրկ էր քաղաքացիների պատշաճ ներգրավվածությունից և վերահսկողությունից:

Իրավական ակտերի նախագծերը տեղադրվում են www.e-draft.am կայքուն՝ հանրությանը հնարավորություն տալով վերանայել, քննարկել և մեկնաբանել դրանք: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների ներկայացուցիչները e-draft.am կայքը չեն դիտարկում որպես շահերի պաշտպանության օգտակար գործիք, քանի որ այն չի ապահովում բովանդակալից և փոխադարձ հաղորդակցություն: Ըստ ՔՀԿ-ների՝ նոր իրավական ակտերի նախագծերի տեղադրման դեպքում նույնիսկ պորտալի բաժանորդները պատշաճ ծանուցում չեն ստանում: Բացի այդ, շատերը չեն գտնում, որ իրենց մեկնաբանություններն ունեն որևէ նշանակալի ազդեցություն: Ըստ այդմ, նախագծերն ունենում են սահմանափակ ներգրավվածություն, և, չնայած հրապարակված իրավական ակտերի թվի աճին, 2021-ին օգտատերերի կողմից արված մեկնաբանությունների թիվը 2020-ի համեմատ նվազել է 51,4 տոկոսով: Բացի www.e-draft.am-ից, 2021-ի սեպտեմբերին կառավարությունը գործարկեց հանրագրերի միասնական էլեկտրոնային հարթակը (www.e-petition.am), որը, change.org կայքի նմանությամբ, քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում ներկայացնել ազգային, մարզային և տեղական իշխանությունների գործունեությանը վերաբերող անհատական և կոլեկտիվ խնդրագրեր: Կառավարական բարեփոխումներին վերաբերող մեկ այլ առցանց գործիք է www.reforms.am պորտալը, որը գործարկվել է 2021-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից: Այս հարթակը, սակայն, ապահովում է միայն տեղեկատվության հասանելիություն, այլ ոչ հետադարձ կապ կառավարության հետ:

Հաշվի առնելով ընդհանուր քաղաքական անկայունությունը, սահմանների անապահովությունը և Արցախի կարգավիճակի վերաբերյալ անորոշությունը՝ ՔՀԿ-ները սկսեցին կիրառել ինքնագրաքննություն՝ խուսափելով գործող կառավարությանը քննադատելուց և սահմանափակելով սեփական շահերի պաշտպանությանն ուղղված ջանքերը: ՔՀԿ-ները, որոնք ակտիվորեն աշխատում են ժողովրդավարության, հակակոռուպցիոն, մարդու իրավունքներին և կառավարության հաշվետվողականության առաջմղման ուղղությամբ, փորձում էին մնալ պասիվ՝ խուսափելու նպատակով հակակառավարական և պոպուլիստական խմբերի թիրախավորումից: Բացի այդ, շատ ՔՀԿ-ներ փոխեցին իրենց առաջնահերթությունները՝ հրատապ հումանիտար կարիքներով զբաղվելու նպատակով: Այս համատեքստում տուժեց ՔՀԿ-ների վերահսկողությունը կառավարության նկատմամբ:

Չնայած նշված մարտահրավերներին՝ տարվա ընթացքում գրանցվեցին ՔՀԿ-կառավարություն համագործակցության մի շարք հաջող օրինակներ: Օրինակ, մարտին ընդունվեց «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը, որը սահմանեց պետական բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների նոր և ավելի կայուն համակարգ: Վերջնական դրույթներից մի քանիսը հիմնականում ջատագովում էր «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամը, որը հիմնադրվել է 2018-ի քաղաքական փոփոխություններից հետո և, հակակոռուպցիոն նախաձեռնություններից բացի, զբաղվում է կրթական բարեփոխումներով:

ԴԱՏԱ ծրագիրը կենտրոնանում է ՔՀԿ-ների կարողությունների զարգացման վրա՝ նպատակ ունենալով նրանց ներգրավել փաստահեն քաղաքականության մշակման գործընթացներում, որոնք իրականացվում են հավաստի տվյալներ հավաքելու, վերլուծելու և հրապարակելու միջոցով: 2021-ին ծրագիրը տրամադրել է ենթադրամաշնորհներ՝ նման աշխատանքը հնարավոր դարձնելու համար և

կարողությունների զարգացմանն ուղղված աջակցություն: Շուրջ 20 ՔՀԿ-ներ անցել են կարողությունների զարգացման ուսուցում՝ քաղաքականության փաստաթղթերի մշակման և շահերի պաշտպանության, ներառյալ խնդիրների բացահայտման, տվյալների հավաքագրման և հետազոտությունների ու քաղաքականության հաղորդակցման վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, 2021-ին ՔՀԿ-ների իրավական և կարգավորող միջավայրը ձևավորող կառավարական նախաձեռնությունները սահմանափակվեցին՝ հետպատերազմական միջավայրում առաջնահերթությունների փոփոխության պատճառով: Արդյունքում, թեև ՔՀԿ-ներն ընդունեցին այս բարեփոխումների կարևորությունը, 2021-ին շահերի նման պաշտպանությունը սահմանափակվեց:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ: 3.7

2021-ի ընթացքում ՔՀԿ-ների կողմից ծառայությունների մատուցումը հիմնականում մնաց անփոփոխ և շարունակեց ձևավորվել՝ պայմանավորված երկրում հետպատերազմական իրավիճակով: 2021-ին ՔՀԿ-ները շարունակեցին իրենց շահառուներին տրամադրել ծառայությունների լայն շրջանակ: Հաշվի առնելով առկա հումանիտար խնդիրները, բազմաթիվ ՔՀԿ-ներ կենտրոնացան տուժած բնակչությանը մարդասիրական, սոցիալական, տնտեսական, առողջապահական, հոգեբանական, կրթական և մշակութային ծառայություններ տրամադրելու վրա: Շատ ՔՀԿ-ներ, որոնք ավանդաբար ծառայություններ են մատուցում մարդու իրավունքների, շահերի պաշտպանության և կառավարության հաշվետվողականության ապահովման ոլորտներում, փոխեցին իրենց ուղղությունը, որպեսզի արձագանքեն մարդասիրական ոլորտում առաջնահերթություններին և հասնեն շահառուների նոր խմբերի: Այդ խմբերը ներառում էին, բայց չէին սահմանափակվում Արցախից տեղահանված կանանց ու երեխաների, տները կորցրած մարդկանց, գերեվարված, սպանված, վիրավորված կամ անհայտ կորած զինվորների ու քաղաքացիական անձանց ընտանիքներով: Բացի այդ, ստեղծվեցին նոր հիմնադրամներ, ինչպիսիք են, օրինակ, «Արեն Մեհրաբյան» նորաստեղծ հիմնադրամը՝ պատերազմում զոհված զինվորի անունով: Վերջինս հաշմանդամություն ունեցող անձանց ապահովում է վերապատրաստման և աշխատանքի հնարավորություններով՝ հաջողությամբ միջոցներ հավաքագրելով իր կայքում ինտեգրված առցանց «նվիրատվություն» կոճակի միջոցով:

2021-ին COVID-19-ի հետ կապված սահմանափակումների մեղմացումը, որը մարտահրավեր էր ՔՀԿ-ների համար 2020-ին, վերջիններիս հնարավորություն տվեց կրկին մատուցել դաշտի հետ կապված ապրանքներ և ծառայություններ՝ նոր մշակված վիրտուալ տարբերակներին զուգահեռ: Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ները դրսևորեցին ամուր կարողություն՝ լուծելու իրենց շահառուների և համայնքների առաջնահերթ կարիքները, ընդլայնելու ծառայությունների շրջանակը և ներգրավելու նոր թիրախային խմբեր ճգնաժամային իրավիճակներում:

Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը սահմանում է, որ ՔՀԿ-ները չպետք է խտրականություն դրսևորեն ապրանքներ և ծառայություններ մատուցելիս՝ պայմանավորված ռասայական, սեռական, էթնիկ, սեռական կողմնորոշման կամ շահառուների այլ հատկանիշներով: ՔՀԿ-ները հիմնականում հետևում են այս կանոնին: Անդամակցության վրա հիմնված ասոցիացիաները առաջնահերթ ապրանքներ և ծառայություններ են մատուցում իրենց անդամներին: Այնուամենայնիվ, նրանց մի շարք գործողություններ ուղղված են նաև արտաքին լսարաններին: Օրինակ, Սոցիալական ձեռնարկատիրության ասոցիացիան, Կորպորատիվ կառավարման կենտրոնը, Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիան և Առևտրաարդյունաբերական պալատը մշակում են ապրանքներ կամ ծառայություններ, որոնք ունեն լայն կիրառում և հասանելի են բոլոր ձեռնարկություններին՝ անկախ անդամակցությունից:

ՔՀԿ-ները տրամադրում են մի շարք վճարովի ծառայություններ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են խորհրդատվությունը, հետազոտությունները և տարածքների վարձակալությունը: Քիչ թվով դեպքերում ՔՀԿ-ներն առաջարկում են հրապարակումներ, սեմինարներ կամ փորձագիտական վերլուծություններ՝ վճարովի հիմունքներով: Այնուամենայնիվ, դեռևս քիչ են փառատոնները, ցուցահանդեսները և համաժողովները, որոնք նպաստում են ՔՀԿ-ների ապրանքների և ծառայությունների ցուցադրմանն ու վաճառքին: ՔՀԿ-ները ստեղծեցին նոր սոցիալական ձեռնարկություններ, ինչպիսիք են Սոցիալական ձեռնարկատերերի միջազգային ակադեմիան և Նորարար Զբոսաշրջությունը, սակայն, ընդհանուր առմամբ, ոլորտը դեռևս ունի ծախսերը փոխհատուցելու սահմանափակ կարողունակություն:

Կառավարությունը հիմնականում բարձր է գնահատում սոցիալական ոլորտում ՔՀԿ-ների կողմից մատուցվող ծառայությունները, իսկ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) սովորաբար ՔՀԿ-ներին է արտապատվիրում մի շարք սոցիալական ծառայություններ: Օրինակ, ԱՍՀՆ-ն տրամադրում է հոգեբանական ծառայություններ և ապաստարաններ ընտանեկան բռնության զոհերի համար՝ տեղական ՔՀԿ-ների կողմից գործարկվող աջակցության տասնմեկ կենտրոնների միջոցով: 2020-ի վերջին ԱՍՀՄ-ն 2,7 միլիոն ԱՄՆ դոլար բյուջեով Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի՝ «Սոցիալական ինտեգրման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագրի իրականացման պատասխանատվությունը փոխանցեց Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիային (ՍԱՀԱ): Ծրագիրն իրականացվել է 2021 և 2022 թվականներին:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ: 3.0

2021-ի ընթացքում ՔՀԿ ոլորտին աջակցող ենթակառուցվածքների մասով փոփոխություններ չեն գրանցվել:

Միջանկյալ աջակցող կազմակերպությունները (ISO) և ռեսուրս կենտրոնները, ինչպիսիք են ԵՀՀ-ն, ՀԿԿ-ն, Գործընկերություն և ուսուցում ՀԿ-ն, ԹԻՀԿ-ը, Ինֆոտուն (տեղեկատվական տուն) ցանցը, Արմավիրի զարգացման կենտրոնը և ԱԼԱ-ն, 2021-ի ընթացքում շարունակեցին օգնություն տրամադրել ՔՀԿ-ներին: ՀԿ Դեպո պորտալը շարունակել է հրապարակել ՔՀԿ-ներին առնչվող տեղեկատվությունը մեկ վայրում՝ ապահովելով թարմացված հայտարարությունների, ռեսուրսների, նորությունների և հնարավորությունների հասանելիություն: Միջանկյալ աջակցող կազմակերպությունները և ռեսուրս կենտրոններն իրենց ծառայությունների մեծ մասը ՔՀԿ-ներին տրամադրում են անվճար: 2021-ին տեղական ենթաբաշխումը եղել է աննշան:

Ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում գործող ՔՀԿ-ները շարունակեցին օգտվել առցանց և դեմ առ դեմ կարողությունների զարգացման և վերապատրաստման ծրագրերից: Այնուամենայնիվ, վերապատրաստումների մեծ մասն անցկացվել է առցանց, ինչը, ՔՀԿ-ների կարծիքով, պակաս արդյունավետ է դեմ առ դեմ ուսուցման հետ համեմատ: Միևնույն ժամանակ, ոլորտի աճող թվայնացումը ՔՀԿ-ներին թույլ տվեց վիրտուալ տիրույթում փնտրել կարողությունների զարգացման նոր հնարավորություններ: Վերապատրաստման հնարավորությունները հասանելի էին նաև դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում, այդ թվում՝ ԵՄ-ի, ԱՄՆ ՄԶԳ-ի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից: Դրանք ներառում էին ՔՀԿ կարողությունների զարգացում, երիտասարդների ձեռներեցություն, շահերի պաշտպանություն, կանանց հզորացում և այլ թեմաներ:

ՔՀԿ-ները պարբերաբար աշխատում են կոնսորցիումներում և շեշտադրում են նման համագործակցության առավելություններն ու արդյունավետությունը բարդ խնդիրների լուծման գործում: Դոնորների՝ հատկապես ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող խոշոր ծրագրերը, խթանում են ՔՀԿ համագործակցությունը՝ դրամաշնորհներ հատկացնելով բացառապես ՔՀԿ կոալիցիաներին: Նման օրինակ է ԴԱՏԱ ծրագիրը, որն իրականացվում է հինգ կազմակերպություններից բաղկացած

կոնսորցիումի կողմից: Ծրագիրը նաև աջակցել է տարբեր ոլորտներում աշխատող ՔՀԿ-ների հինգ ցանցերի՝ ներառյալ աշխատանքային իրավունքը, պետական գնումները, համայնքների սոցիալ-բնապահպանական զարգացումը, հոգեկան առողջության խնդիրները և ռազմավարական զարգացումը: Բացի այդ, մի քանի ակտիվ կոալիցիաներ դրականորեն են ազդում իրենց համայնքների ընդհանուր միջավայրի վրա և գործում են անկախ դոնորների ֆինանսավորումից: Նման գործընկերությունները ներառում են, օրինակ, Կանանց նկատմամբ բռնության դադարեցման կոալիցիան (տաս ՔՀԿ-ներ ներառող կազմակերպություն) և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան (բաղկացած ավելի քան յոթանասուն ՔՀԿ-ներից): Չնայած ՔՀԿ-ների միջև համագործակցության զարգացմանը՝ ընդհանուր միջավայրը մնում է ավելի շատ մրցակցային, քան համագործակցային: Արդյունքում կազմակերպությունները խմբավորվում են տարբեր դոնորների հովանու ներքո և մրցում միմյանց հետ:

Առկա են ՔՀԿ-բիզնես համագործակցության մի քանի օրինակներ: Օրինակ՝ Վիվա-ՄՏՍ-ը՝ հեռահաղորդակցական ընկերությունը, և Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը» աջակցություն և բնակարան են տրամադրել տեղահանված և սոցիալապես անապահով ընտանիքներին, իսկ «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն, HSBC բանկի հետ համատեղ, կազմակերպել է բիզնես դասընթացներ երիտասարդների համար: Այնուամենայնիվ, այսպիսի դեպքերը բացառիկ են, և նման գործընկերությունների թիվը 2021-ին նվազել է՝ 2020-ին մարդասիրական ճգնաժամին արդյունքում գրանցած աճից հետո: ՔՀԿ-կառավարություն համագործակցությունը նույնպես իրավիճակային է և ինստիտուցիոնալացված չէ, և համագործակցությունը հիմնված չէ ռազմավարական ծրագրերի վրա: Համագործակցության ծավալը հիմնականում պայմանավորված է նախարարությունների կամ տեղական ինքնակառավարման մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների անձերով: Դրական իմաստով բացառություն է ԱՍՀՆ-ն, որն ամուր կապեր ունի սոցիալական ծառայություններ մատուցող ՔՀԿ-ների հետ, և ԱՆ-ի «Օրենսդրության զարգացման կենտրոն»-ը, որը տարվա ընթացքում համագործակցել է տարբեր շահագրգիռ կողմերի հետ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ: 3.7

ՔՀԿ-ների ընդհանուր հանրային իմիջը 2021-ին մնացել է անփոփոխ՝ արձանագրելով ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումներ: Մի կողմից, ՔՀԿ-ները բարելավեցին իրենց հանրային իմիջը հումանիտար խնդիրների լուծմանն ուղղված ամենօրյա աշխատանքի շնորհիվ: Մյուս կողմից, սակայն, նրանք դարձան քավության նոխազ նախորդ իշխանությունների կողմնակիցների համար՝ մեղադրվելով «արևմտյան օրակարգը» առաջ մղելու և պատերազմում երկրի պարտությանը նպաստելու մեջ: Տարածաշրջանային ՔՀԿ-ների հանդեպ առկա է ավելի դրական հանրային վերաբերմունք, քան Երևանում գործողների հանդեպ՝ հիմնականում շնորհիվ համավարակի և պատերազմի ժամանակ ամենօրյա աշխատանքի և տեղի բնակչության հետ սերտ հարաբերությունների:

ՔՀԿ-ների հանդեպ դրական դիրքորոշում ունեցող մեդիա հարթակները՝ «Հոդված 3» ակումբը (ղեկավարվում է «Հանուն հավասար իրավունքների» կողմից), «Մեդիա կենտրոնը» (ղեկավարվում է Հանրային լրագրության ակումբի կողմից), «Ազատություն» ռադիոկայանը/ԱՄՆ, «Սիվիլնեթը», «Ֆակտոր» հեռուստաընկերությունը և «Ինֆոկոմ» տեղեկատվական կոմիտեն (հայտնի է որպես Infocom տեղեկատվական պորտալ), ՔՀԿ-ներին հնարավորություն են տալիս տարածելու իրենց հաղորդագրություններ: ՔՀԿ-ների նկատմամբ թշնամաբար տրամադրված լրատվամիջոցները, որոնք հիմնականում ֆինանսավորվում են նախորդ իշխանությունների ներկայացուցիչների կողմից, ՔՀԿ-ներին լուսաբանում են բացասական լույսի ներքո: 2021-ին լայն տարածում ստացան ավանդական և

թվային լրատվամիջոցների նոր ձևաչափեր՝ աուդիո և վիդեո փոդքասթներ, հարցազրույցներ, բանավեճեր և հանրային քննարկումներ: ՔՀԿ-ների ներկայացուցիչները հրավիրվում էին մասնակցելու նմանատիպ ծրագրերի: Օրինակ, Infocom տեղեկատվական պորտալը մեկնարկեց վիդեո փոդքասթների շարք, որոնցում տարբեր ՔՀԿ-ների ներկայացուցիչներ լուսաբանում են սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի, կրթության, գիտության հետ կապված և այլ թեմաներ: Այլ օրինակներ են Հանրային հեռուստաընկերությունը, որը հեռարձակում է «Հանրային երկխոսություն» հաղորդումը, և Հանրային ռադիոն, որը թոք-շոուներում ներգրավում է ՔՀԿ-ների ներկայացուցիչների՝ ի թիվս քաղաքական գործիչների և փորձագետների:

ՔՀԿ-ների վերաբերյալ հանրային ընկալումները 2021-ին բարելավվեցին՝ մարդասիրական օգնություն տրամադրելու և շահառուների կարիքները հոգալու առումով՝ համավարակի, Արցախյան պատերազմի և հետպատերազմական իրականությունում ներդրած ջանքերի շնորհիվ: ՔՀԿ-ների և քաղաքացիական նախաձեռնությունների ամենօրյա աշխատանքը համայնքային մակարդակով՝ տեղահանվածների, զոհված զինվորների ընտանիքների և սոցիալապես խոցելի խմբերի հետ, ի թիվս այլոց, ամրապնդեց նրանց դրական կերպարը հանրության շրջանում: ՔՀԿ-ները նաև շարունակաբար բարելավում և ընդլայնում են իրենց ներկայությունը սոցիալական մեդիա հարթակներում:

Զգտելով քաղաքական անկայուն իրավիճակն օգտագործել իշխանությունը վերականգնելու նպատակով՝ նախորդ կառավարության ներկայացուցիչներն ու կողմնակիցները կառավարությանը զրպարտող իրենց արշավներում հաճախ թիրախավորում էին ՔՀԿ-ներին, հատկապես նրանց, որոնք կենտրոնացած էին մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի, ժողովրդավարական արժեքների քարոզչության և շահերի պաշտպանության վրա: Նշված ՔՀԿ-ները մեղադրվում էին պետությունը, ազգային անվտանգությունը և բանակը խարխլելու և, այդպիսով, պատերազմում երկրին պարտության տանելու մեջ: Բացի այդ, ՔՀԿ-ները մեղադրվում էին երկրում «արևմտյան օրակարգ» քարոզելու մեջ, որը հակասում է ազգային, ավանդական և ընտանեկան արժեքներին: Ինչպես նախորդ տարիներին, «Սորոսյան» բառը՝ բարերար Ջորջ Սորոսի անվան վրա հիմնված նվաստացնող տերմինը, լայն տարածում ստացավ և օգտագործվեց՝ վարկաբեկելու նպատակով որոշ ՔՀԿ-ների, որոնք ստանում են օտարերկրյա ֆինանսավորում և իրականացնում են ջանքեր՝ ուղղված շահերի պաշտպանությանը: Այնուամենայնիվ, 2021-ի հուլիսին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո, որոնցում ընդդիմությունը ստացավ խորհրդարանական մանդատներ, ՔՀԿ-ներին թիրախավորող ուղերձներն ավելի հազվադեպ դարձան, և քննադատությունը հիմնականում ուղղվեց դեպի կառավարության կողմը:

Կառավարությունը ոչ միանշանակ վերաբերմունք է ցուցաբերում ՔՀԿ-ների նկատմամբ՝ դասակարգելով նրանց որպես «բարենպաստ» և «հավատարիմ» կամ «թշնամական» և «անբարենպաստ»: Նրանք, ովքեր քննադատում են կառավարությանը, ամենայն հավանականությամբ կհամարվեն «անբարենպաստ»: ԱՄՀՆ-ն, սակայն, վստահում և բարձր է գնահատում ՔՀԿ-ների կողմից մատուցվող ծառայությունները: COVID-19-ի և պատերազմի հետևանքով ստեղծված ճգնաժամերի հաղթահարման նպատակով, շնորհիվ ՔՀԿ-ների հետ համատեղ ծրագրեր իրականացնելու փորձի, բիզնես ոլորտում ՔՀԿ-ների մասին պատկերացումներն ու ընկալումները բարելավվեցին:

Ոլորտի ընդհանուր թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարելավվեց 2021-ի մայիսին ֆինանսական գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր պահանջների ուժի մեջ մտնելուց հետո: Այնուամենայնիվ, միայն համեմատաբար խոշոր ՔՀԿ-ներն են լրացուցիչ ջանքեր գործադրել իրենց թափանցիկությունն ապահովելու համար՝ ընդունելով վարքագծի կանոններ և հրապարակելով օգտագործման համար հարմարավետ հաշվետվություններ: Որպես կանոն, ՔՀԿ-ները հակված են հրապարակելու ընդհանուր բնույթ կրող հաշվետվություններ, և ՔՀԿ-ների գործունեության ու ֆինանսական հոսքերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության հրապարակումը դեռևս մնում է սահմանափակ:

Ծանուցում. Այս զեկույցում ներկայացված են քննարկումների մասնակիցների և նախագծի փորձագետների կարծիքները, և պարտադիր չէ, որ դրանք արտացոլեն USAID-ի կամ FHI 360-ի տեսակետները:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
1300 Փենսիլվանիա պողոտա
ՀԱ Վաշինգտոն DC 20523
Հեռ: (202) 712-0000
Ֆաքս: (202) 216-3524
www.usaid.gov